բութիւններին, հասարակական կազմակերպութիւններին ու մասնաւոր անհատներին թողնում էր իրաւունք բանալու և պահելու որբանոցներ, միայն պետութեան հսկողութեան տակ:

Դարձեալ հոկտ. 11-ին յատկացուեց 12,736,250ռ. որբերի, անճար և աննեցուկ դաղթականների օգնութեան և դաղթականներին տրամադրելիք բնակարանների վերաշինութեան համար:

Խորհուրդը արձակեց նաև մի շարք վճիռներ աշխատաւորութեան ու պաշտօնէութեան, հաշմանդամների և պետական ու հասարակական պարտականութիւններ կատարելիս մեռածների վիճակը բարելաւող, հարկային ու պարենաւորման դրութիւնը կարդաւորող: Վարկեր յատկացուեցին մթերքների դնման, ոստիկանութեան ու նոր զօրամասերի կազմակերպման, քաղաքային ինքնավարութիւնների ու կօօպերատիւների օգնութեան և համանման ուրիշ կարիքների համար:

Պէտք է նկատել, որ Հայ. Խորհրդի աշխատանքը ամբողջապէս ուղղուած էր երկրի ընթացիկ սուր կարիքների մեղմացմանը: Հիմնական շինարարութեան մասին, ի հարկէ, խօսք լինել չէր կարող: Նոյնը և կառավարութեան գործունէութեան մէջ. նա գերագոյն ճիգ էր թափում, դլխաւորապէս, օրւայ հրամայական պահանջներին բաւարարելու համար. հաց, դեղ և անդորրութիւն — այս երեք խնդիրներով կարելի էր սպառել այն ժամանակւայ «պետական շինարարութիւնը»:

Իր խղճուկ միջոցներից Հայաստանը ստիպւած էր բաժին հանել և երկրից դուրս գտնւող կարօտեալներին: Հոկտ. 26-ին, Հայ. Խորհուրդը կէս միլիոն բուբլի յատկացրեց Բաքուի հայ աղէտեալներին, նոյ. 4-ին 5 միլիոն բուբլի քէշարկեց՝ Վրաստանի Հայոց Ազդային Խորհրդին միանուագ նպաստ տալու համար, դեկտ. 3-ին 300,000ռ. վարկ բաց արաւ Պարսկաստանի հայ փախստականների օգնութեան և այլն: Փշրանքներ էին սրանք տիրող ծով կարիքի համեմատութեամբ, բայց Հայաստանի սեղանի վրա էլ փշրանքից զատ բան չկար, հայ ժողովուրդը չունեցածից էր տալիս:

*

Հոկտ. 5-ին Խալիլ փաշան Երևանում յայտնեց, որ ինքը հրաման է ստացել դատարկելու Լոռի-Փամբակի շրջանը: Անմիջապէս հայ և թիւրք հրամանատարութիւնները դծեցին այդ շրջանը հայերին փոխանցելու ծրագիրը, և Հայաստանի կառավարութիւնը հրամայեց Դիլիջան-Լոռիի զօրամասի պետ Դրօին՝ բռնել հեռացող թիւրք զօրքերի տեղը:

Դիլիջան-Լոռիի զօրամասը, այդ միջոցին, բաղկացած էր հետևեալ ուժերից. պարտիզանական հետևակ դունդ՝ գնդ. Միրիմանեանի հրամանատարութեան տակ, պարտիզանական ձիաւոր դունդ՝ հրամանատար գնդ. Կորոլկով, 4-րդ լեռնային մարտկոցը (4 թնդանօթ) և նոր կազմւող Ղազախի միլիցիոն դունդը՝ ապայ Թ. Մնացականեանի դլխաւորութեամբ: Դրօն զօրամասի հրամանատար էր նշանակւած օգոստոսին: Քաղաքացիական մասի օգնականն էր Ս. Մանասեանը: